Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Chirurgien Gty-S
Egypt. whole & broken
21 pieces
5 vrs

17n.604.

Հրատարակութիւն Վահան Զարդարեանի Գրատան
Թատերական Պատճառարան Թիւ 1

ՆԱ ՉԸ ԼԻՆԻ ՍԱ ԼԻՆԻ

կամ

ՄԱՇԱԴԻ-ԻԲԱԴ

ՈՒՐԱԽ ՕՊԵՐԷԹ 3 ԱԲԱՐ

Հեղինակ
ՈՒՉ. ԲԷԳ ՀԱՋԻԲԷԳՈՎ,
Թարգմանութիւն Բ. ԱԲՈՎԵԱՆԻ (բարեփոխուած)

Բ. ԱԲՈՎԵԱՆ ՄԱՇԱԴԻ ԴԵՐԻՆ ՄԷՋ

ԳԱՀԻՐԷ, 1923
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ

894362

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ՌՈՍՏՈՄ ՊԷԿ — Սնանկացած կալուածատէր
2. ԳԻՒԼՆԱԶ — Բէկի աղջիկը
3. ՍԱՐՈՒԱՐ — Գիւլնազի սիրահարը
4. ՍԱՆԱՄ — „ ազախինը
5. ՄԱԾԳԻ—Ի ԲԱԴ — հարստացած մանրավաճառ
6. ՀԱՍԱՆ ԳԱՌԼԻ ԲԷԿ —
7. ՕՒԶԱ ԲԷԿ — խմբագիր
8. ՀԱՍԱՆ ԲԷԿ — ինդիլիգենտ
9. ԱՍԿԵՐԱՐ
10. ՀԱՄՄԱԼ

հարամեաց հիւրեր, փողոցից
անցուդարձ անողներ

Ա. ԱՐԱՐ

Թեմը ներկայացնում է պարզ սենեակ յաւ կահաւորուած երեք դռներով։

ՏԵՍԻԼ 1

ԵՐԳ.

Գիւլնազ.— Օր ու գիշեր մտածում եմ,
Կարծես թէ երազում եմ, (2 անգամ)
Ի՞նչ է սերը չը գիտեի,
Քեզ տեսնելով սիրեցի։ (2 անգամ)
Այնպէս սիրեցի, այնպէս սիրեցի
Սրտանց սիրեցի հոգի ջան
Որ առանց քեզ չեմ ապրիլ։

Սարվար Դու ես սրտիս թագուհին,
Մատաղ լինեմ քո կեանքին (2 անգամ)
Ա՛խ, ի՞նչպէս քեզ սիրում եմ,
Քո սիրովդ տանջւում եմ (2 անգամ)
Այնպէս սիրեցի, այնպէս սիրեցի,
Սրտանց սիրեցի հոգի ջան
Որ առանց քեզ չեմ ապրիլ։

ՀՅՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱՅԱՀԴԵՄԻԱ

35303

Միասին. — Ոչ որ մեզ չի բաժանի
Թեզ ինձանից չի խլի
Դու ես սրտիս սիրելին
Թեզ սիրեցի իմ անգին
Այնպես սիրեցի ես այլն.

ԳԻՆԻ. — Սարվա՛ր, ինչ է պատահել քեզ, այսօր շատ տխուր ես երևում։

ՍԱՐ. — Այո՛, շա՛տ ճիշդ ես ասում։ Ահա երկու րօ է ես մտածմունքի մէջ եմ.

ԳԻՆԻ. — Ինչ է պատահել, ասա՛ տեսնեմ։

ՍԱՐ. — Ա՛յն, որ հայրդ ուզում է քեզ ուրիշի հետ ամուսնացնել։

ԳԻՆԻ. — (վախենալով) Այդ ո՞վ է ասում։

ՍԱՐ. — Ես այդ հաստատ տեղից եմ լսել։

ԳԻՆԻ. — Ո՛չ, ո՛չ, ես բացի քեզանից, ո՛չ մի մարդու չեմ գնալ, թող որքան էլ ուզում են ինձ տանջեն։ Ես քեզ եմ սիրել և քեզ հետ պէտք է ամուսնանամ։

ՍԱՐ. — Բայց չէ՞ որ այդ մարդը ինձանից հարուստ է։

ԳԻՆԻ. — Ինչխա է պէտք նրա հարստությունը.

ՍԱՐ. — Ինձնից գեղեցիկ է։

ԳԻՆԻ. — Ինձ պէտք չէ։

ՍԱՐ. — Ինձնից ջահել է։

ԳԻՆԻ. — Ուզում է բոլորովին երիտասարդ լինի, ինձ պէտք չէ։

ՍԱՐ. — Կատակ եմ անում, սիրելի Գիւլնազ, ճիշդ է այդ մարդը թէև ինձանից շատ հարուստ է, բայց հասակով շատ մեծ է։ Մօտ 50 տարեկան կը լինի, և դէմքով էլ շատ տգեղ, օր տեսնես կը վախենաս։

ԳԻՆԻ. — Ոչ, ես այլևս չեմ կարող սպասել. և հէնց այսօր հօրս պէտք է ասեմ, որ ես քեզ եմ սիրում և ոչ ոքի չեմ գնալու բացի քեզանից։

ՍԱՐ. — Ո՛չ, Գիւլնազ, այդպէս չէ կարելի, ինձ լաւը, ապա թէ ոչ գործը կարող է վատ ընթացք ստա-

նալ։ Ես գիտեմ որ հայրդ շատ պարտքեր ունի և փողի կարիք է զգում։ Այդ պատճառով էլ նա ուզում է այդ բարեկամությունը՝ այն մարդու հետ, որի անունն է Մաշտի-Իրադ, որ իրա պարտքերը թեթևացնէ. մեկա չունի թող այդպէս լինի։ Դու հօրդ ընդդէմ բան չասես, և երբ հայրդ բան կ'ասէ, դրա մասին, ասա՛ որ «ինքդ ես իմանում, ինչպէս ուզում ես այնպէս արա՛»։ Իսկ յետոյ ես գիտեմ թէ ինչ կ'անեմ, արդէն ամէն բան ծրագրել եմ մեր օգտին։

ԳԻԻԼ.— Բայց ես ինչպէս համաձայնեմ, եթէ նա ինձ ուրիշին տայ։

ՍԱՐ.— Դու դրա մասին անհոգ եղիր և մի մտածիր թէ քեզ իմ ձեռքից մէկը կարող է խլել։ Բայց դու միայն լսի՛ր և կատարիր իմ խորհուրդները։

ՏԵՍԻԼ 2

ՍԱՆԱՄ (մտնում է) Ա՛խ, հրեշտակներս, երանի Ձեր հարսանիքին մի լաւ պարեմ։

ՍԱՐ.— Երեւի այս մօտ օրերս կը պարես։

ՍԱՆԱՄ.— Ինչպէ՞ս, շուտով հարսանիք պիտի լինի՞.

ՍԱՐ.— Այո՛, բայց հարսանիքը ես չեմ անում, Ռուստամ Բէգը Գիւլնազին մէկ ուրիշ մարդի է տալիս։

ՍԱՆԱՄ.— Վա՛յ, քաղ ընկնի գլխիս, եարաբ ո՞ւմ հետ է ուզում պսակի։

ՍԱՐ.— Քաֆթարի մէկի հետ։

ՍԱՆԱՄ.— Վա՛յ, հազա նրա քաֆթար գլխին, մինթէ կարելի՞ է սրա պէս աղջկան տալ մի պառաւ մարդի։

ՍԱՐ.— Ոչինչ, ես գործը ուրիշ կերպ կը դրատեմ, Գիւլնազս, մի տրտմիր։ Ո՞վ իրաւունք ունի եարը եարից բաժանելու։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Սար. Ո՞վ իրաւունք ունի եարը եարից բաժանի,
Դու հանգիստ կաց, սիրուն եար։
Ո՞վ քեզ կարող է տանել։ (2 անգամ)

Միասին.— Բոյիդ բոսիդ դուրբան Գիւլնազ,
Գիւլնազ, Գիւլնազ, սեւ աչերիդ դուրբան,
Գիւլնազ, Գիւլնազ, Գիւլնազ։ (կրկ.)

Գիւլնազ.— Ես միայն քեզ եմ սիրում։
Միայն քեզանով ապրում։ (կրկ.)
Մատաղ լինեմ քո բոյիդ
Սեւ սեւ կամար ունքերիդ (կրկ.)

Միասին.— Բոյիդ-բոսիդ դուրբան Սարվար, Սարվար
Սեւ աչերիդ դուրբան » »

Սարվար.— Երբ լսում եմ քո ձայնդ,
Բլբուլի պես խօսելդ, (կրկ.)
Մոռանում եմ ուժեղ բան,
Միայն թէ քեզ ինձի տան։

Մաիս. Բոյիդ-բոսիդ դուրբան Գիւլնազ Գիւլնազ Գիւլնազ,
Սեւ աչերիդ դուրբան » » »

(Դուռը ծեծում են)

ՄԱՆԱՄ.— Վա՛յ կարծես ազէս եկաւ, փախի՛ր, շուտով փախիր։

ԱՐ.— Դէ՛հ, սիրելի Գիւլնազս, առ այժմ ցտեսութիւն, ի՞նչ որ ասացի չը մոռանաս, հօրդ էլ չ'ընդդիմանաս։ (Գնում է)։

ՏԵՍԻԼ 3

ՌՈՍՏՈՄ-ԲԷԿ.— (մտնում է) ԵՐԱԺՇՏՈՒԹԻՆ

Աղջի՛կս, քեզ բարով տեսայ,

ԳԻԼՆԱԶ։— Քեզ բարի լոյս ա՞խ հայրիկ ջան։

ՌՈՍՏ ԲԷԿ.— Աղջիկս քեզ կօշիկ առնեմ։

ԳԻԼՆԱԶ.— Ա՛ռ հայրիկ ջան, ես քեզ մատաղ։

ՌՈՍՏ ԲԷԿ.— Աղջիկս քեզ վզնոց առնեմ։

ԳԻԼՆԱԶ.— Ա՛ռ հայրիկջան ես քեզ մատաղ։

ՌՈՍՏ-ԲԷԿ — Աղջիկս քեզ ամուսնացնեմ։

ԳԻԼՆԱԶ.— Ո՛չ, հայրիկ ջան ես քեզ մատաղ։

ՌՈՍՏ ԲԷԿ— Աղջի՛կս, ոչ ես ասում։ Քեզ համար մի փեսացու եմ ճարել, որ չափից դուրս հարուստ և ինքն էլ համեստ մարդկանցից է։ Թէպէտ ճիշդ է, հասակով

մի քիչ մեծ է, բայց լաւ իմանաս որ, ճրագով աչ ման գաս, այդպիսի մարդ աշխարհիս երեսին չես կարող ճարել։

ՍԱՆԱՄ.— Է՛հ, քանի որ քաջքթաւռ է, ցաւս իրան էլ, հարատեւթեանն էլ։

Ռ.-ԲԷԿ.— Աղջի՛ դու սուս արա։ Ձայնդ կտրի, քո ինչ գործն է հայվան

ՍԱՆԱՄ. Որքան էլ հայվան լինիմ, ես ջահիլ աղջկայ չեմ ամուսնացնել մի քաջքթարի հետ։ Ատուած վըկայ, նրա սիրուց շատ մեռնողներ կան։

Ռ. ԲԷԿ.— Աղջի՛, երբ ես քեզ հասակով մարդի հետ ամուսնացնեմ, այն ժամանակ դու մի գնա՛, աղջիկը իմա է, կ՛ուզեմ ջահիլի կ՛տամ, կ՛ուզեմ պառաւի, քո ի՞նչ գործն է։ Այնպէս չէ՞ աղջիկս։

ԳԻՒԼՆԱԶ.— Ոչինչ չունեմ ասելու հայրիկ, իմ միակ պարտականութիւնն է քեզ լսել, դու ես իմանում, ինչպէս ուզում ես, այնպէս արա։

Ռ.-ԲԷԿ.— Ահա այդպէս, իմ խելացի աղջիկս, ես լաւ գիտէի, որ դու իմ խօսքից դուրս չես գալ, և հէնց այդ պատճառով ես նրան խօսք եմ տուել։ Նա այսօր գալու է այստեղ, շատ կարելի է որ կամենայ քեզ տեսնել և հետդ խօսիլ։ Վնաս չկայ, ես քեզ թոյլ եմ տալիս, տեսնուիր հետը, խօսի՛ր, բայց չի վախենաս։

ՍԱՆԱՄ.— Ուրեմն այդ գեղջունը մտածը էնքան անճառնի է որ, մարդ տեսնելուց կարելի է վախենալ։

Ռ. ԲԷԿ.— Աղջի դու եկ, ի սէր Ատուծոյ իմ գործերում մի խառնուիր։

ՍԱՆԱՄ.— Ատում ես չ՛վախենաս, ես էլ հարցնում եմ։

Ռ.-ԲԷԿ.— Աղջի փակի՛ր բերանդ։

ՍԱՆԱՄ.— Ի՞նչ եմ ասում որ։

Ռ.-ԲԷԿ.— Մ՛յ հայվան, մի խօսիր ասում եմ է՞։

ՍԱՆԱՄ.— Ախր ի՞նչ ասացի որ բարկանում ես։

Ռ.-ԲԷԿ.— Մ՛յ մուռթուպի աղջիկ, ձէնդ կտրելու ես թէ չէ, աղախին ես, գնա՛ խոհանոցդ վար ընկիր։

ՍԱՆԱՄ.— Ախր ոչինչ չեմ ասել որ...

Ռ.-ԲԷԳ.— Աղջի՛ մի խօսիր։
ՍԱՆԱՄ.— Զը խօսած ի՞նչ եմ անում որ։
Ռ.-ԲԷԳ.— Աղջի թողնելու ես գործս տեսնում թէ չէ։
ՍԱՆԱՄ.— Ախր ի՞նչ եմ անում որ, է՛,
Ռ.-ԲԷԳ.— Աղջի՛ (դուռը ծեծում են)։ Եկէ՛ք այս կողմը, շատ կարելի է նա է։ (դնացին)

ՏԵՍԻԼ 4

ՄԱՇՏԻ. (մտնում է, պարում ու երգում է)

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ես որքան էլ ծերացած լինեմ,
Հազար ջանելի կ՚արժենամ,
Ալջիկ չեմ ուզի ամէն մարդուց
Ամենի տունը ես չեմ գնա,
Չեմ բարեւի ամենին։
Ե՛կ Գիւլնազ խանում, ինձ մօտիկ,
Իմ անգինս, ինձ մօտ ե՛կ։ (կրկ.)
Քեզ մաշալ, քեզ մատաղ, քեզ մատալ եկ։ (կրկ.)
Դու ես ճարը իմ ցաւերի,
Չեմ խնայի իմ կեանքս։
Իմ ջանս, իմ մայս, իմ փողս քեզ։

ՏԵՍԻԼ 5

Ռ. ԲԷԳ.— (երգ.) Մաշդի Իբատ դու մեր տունը
Հազար բարով ես եկել (կրկ.)
Ի՞նչպէս եղաւ որ հոգի ջան
Մտաբերեցիր տուն մտար։ (կրկ.)

ՊԱՐ

ՄԱՇԴԻ.— (երգ) Ա՛յ մարդ քո արեւն եմ ասում,
Քեզ ամենից շատ եմ սիրում, (կրկ)
Դու քո ալջիկդ ինձի տուր,
Տես թէ ի՞նչպէս եմ ես պահում (կրկ.)

ՊԱՐ

Ռ. ԲԷԳ.— Ա՛յ մարդ դու ինձ ասա տեսնեմ,
Գրպանդ լի՞ֆն է փողերով,

Ես ֆեզի օրիորդ աղջիկ տամ,
Ոչ թե այրի կին սեւ շորով։

ՊԱՐ

ՄԱՇԴԻ.— Փող կ'ուզես տամ,
Ռ. ԲԷԳ.— Խնդրեմ տուր։
ՄԱՇԴԻ.— Աղջիկդ կ'տաս։
Մ. ԲԷԳ.— Կը տամ։
ՄԱՇԴԻ.— Ասա fo արեւ։
Ռ. ԲԷԳ.— Ֆո արեւ։
ՄԱՇԴԻ.Եթե այդպես է, տուր ձեռքդ։

ՊԱՐ

ՄԱՇԴԻ.— Ուստամ բէգ, ասա տեսնեմ քո վերջին խօսքը, տեսնեմ աղջիկդ ինձ տալի՞ս ես թէ չէ, եթէ չի տաս, էլ ինձ համար միեւնոյնն է, կը գնամ մէկ ուրիշը կ'առնեմ, և կ'ասեմ. «Սա չի լինի, նա լինի»։
Ռ. ԲԷԳ.— Մաշդի-Իբադ, ես իմ խօսքիս տէրն եմ, բայց դու էլ մի քիչ պէտք է որ (բուռթ մատը և ցուցամատը իրար քսելով)։
ՄԱՇԴԻ.— 1000 բուբլի բաւական է։
Ռ. ԲԷԳ.— 1000 էլ աւելացրու։
ՄԱՇԴԻ.— Ա՛յ մարդ մի Ամբար էլ հարսանեաց ծախս ունեմ
Ռ. ԲԷԳ.— Մաշդի, ճիշդ ես ասում, բայց ի՞նչ արած, եթէ մի քիչ ջահիլ լինէիր այդ բանը քեզ էժան կը նստէր, բայց ախուս որ ծեր ես, մեղքը քեզանում է։
ՄԱՇԴԻ.— Ա՛յ մարդ Ասուած վկայ, ես որքան ծերացած լինեմ, կ'արժենամ հազար ջահիլների, հիմա առ այս 1500 բուբլին իսկ մնացած 500ը յետոյ կ'տամ։
Ռ. ԲԷԳ.— Կարելի է, վնաս չկայ։
ՄԱՇԴԻ.— Հիմա ես ուզում եմ աղջիկը տեսնեմ և խօսացնեմ, հը՞։
Ռ. ԲԷԳ.— Խօսք չունեմ, համեցէք, այստեղ նստիր և այս բոպէիս ուղարկեմ (գնում է)։

ՄԱՇԴԻ. — (մենակ) Եղբայր կատակ չէ, մի փէշ փող եմ տալիս, տեսնեմ ապրանքը ի՞նչ ապրանք է, արժէ՞ տուածս փողը թէ չէ, իմ ուզածը նա է որ ինձ յարմար աղջիկ լինի, թէ չէ ինձ համար տարբերութիւն չկայ, «Սա չը լինի, նա լինի»։ Ա՛յ մարդ ես չի կարողացայ հասկանալ թէ մարդիկ ինչի՞ս են ծեր ասում։ Ինչպէս երևում է, նրանց աչքերը չեն տեսնում։ Ա՜հա այս հայելին, սա էլ ես։ (Նայում է հայելուն) կարծես թէ այստեղ, մի հատ սպիտակ մազ լինի, պէտք է հանել։ Հը՞, անտէր մնաս։ Հայելան գալլաքը հինան վատ է քսել. ըըը՛չ. ծերը նա է որ ատամներ չունի, աչքերը չեն տեսնում, ականջները չեն լսում և տեղից չի կարողանում շարժուել։ Փա՜ռք Աստուծոյ ես հօ բոլորովին թռչունի եմ նմանում, հո՛պ, թիր, թիւ, մալադէց ասեմ, աչքս չի կպնի, էհ հատակս էլ 50 տարեկան կամ լինի կամ չի լինի։ Ա՛յս ամէնը լաւ, հիմա էս գլխարկս ինչպէս ծածկեմ որ աղջիկը ինձ հաւանի, եթէ այսպէս ծածկեմ, այն ժամանակ նա կարող է վախենալ և կը կարծի թէ Բագրի զօրիներից եմ, եթէ այսպէս ծածկեմ. այն ժամանակ աղջիկը կը խրտնի և կը կարծի թէ Ղարաբաղի քաղցած բէգերից եմ։ Իսկ եթէ այսպէս ծածկեմ, այն ժամանակ Շիրուանցի Լօթիներին կը նմանիմ։ Ուրեմն, ի՞նչպէս ծածկեմ։ Բոլորից լաւն այն է որ գլխարկս վերցնեմ, և ահա այսպէս նստեմ, այն ժամանակ նա կը կարծէ թէ ես աբրաբզոնի եմ, ասենք իսկապէս ես մի քիչ աբրաբզոնի եմ հա՛... որովհետև ռուսները ինձնից շատ են առաւելութիւն անում և նրանցից մաւականին ռուսերէն սովորել եմ։ Օրինակ, ըշտատաքոյ. բոժօլուստքա, ֆունտ սուրուխնացդ քեսափիդ, մինչի նիլչայ- (Ոտնաձայն) Կարծեմ աղջիկը գա, լիս է, հիմա ես պէտք է լուռ լինեմ. (Բազկաթոռին վրայ ծալապատիկ նստում է)։

ՏԵՍԻԼ 6

ԳԻԻՎ.— Հո ես այս մարդուց վախենում եմ։
ՍԱՆԱՄ.— Ինչ անճառնի մարդ է Տէր Աստուած։
ՄԱՇԴԻ.— Կարծես թէ ինձանից վախենում են։ Ո՞չինչ, այդ լաւ է, կինը տղամարդուց միշտ պէտք է վախենայ, ասացէք խնդրեմ։ Ձեզանից ո՞րն է խանումը, և ո՞րը ազախինը։
ԳԻԻՎ.— Ես խանումն եմ, իսկ սա ազախինը (նըստում են)
ՄԱՇԴԻ.— Շատ լաւ։ Ազախինն էլ պակասը չէ՛. բայց խանումին էլ խօսք չ՛ունի. արժէ տուածս փողը։ Խանում, քո ծամերը որ այնքան սև են, երևի դու էլ ինձ պէս յինա ես գործածում։
ԳԻԻՎ.— Ո՛չ, ես յինա չեմ գործածում։
ՍԱՆԱՄ.— Եւ ոչ էլ ես։
ՄԱՇԴԻ.— Հա՞... որովհետև ես մօրուքիս յինա եմ դնում, կարծեցի թէ դու էլ քո մազն ես յինայում. միանգամայն սխալ բան, ինչ կարիք կար յինայի մասին խօսք բացելու, բոլորովին տեղը չէր։
ԳԻԻՎՆԱԶ.— Իմ մազերը չեն սպիտակել, որ ես յինա գործածեմ։
ՍԱՆԱՄ.— Փառք Աստուծոյ, իմ խանումը հօ դեռ չի ծերացել որ...
ՄԱՇԴԻ.— Ո՛չ, ո՛չ իմ մօրուքս էլ դեռ չի սպիտակել, խանում։ Ես յինա դնեմ, չի դնեմ միշտ սև է, բայց դա ինձ համար սովորութիւն է դարձել, Աստուած ողորմի ձեր անցաւորաց, իմ հանգուցեալ մայրս կ՛ասէր, որ գլխիս յինայի ժամանակը որ անցնում է, գըլուխս ցաւում է, որովհետև դա ինձ համար սովորութիւն է դարձել-
ԳԻԻՎ.— Երեւի ձեր մերուքի յինայելու ժամանակը որ անցնում է, դուք ցա՞ւ էք զգում։
ՄԱՇԴԻ.— Այո՛, զգում եմ. սարսափելի ցաւ եմ ըզգում։ Բայց մի բան էլ ասեմ, երբ մարդուս գլխի կամ

միրուքի մազերը սպիտակ է լինում, դա չի նշանակում որ նա արդէն ծերացել է, օրինակ. ես տեսել եմ, երկու տարեկան ռուսի երեխա, որի գլխի մազերը ձիւնի պէս սպիտակ էին, բայց ի հարկէ նրան չի կարելի ծեր անուանել։ Բայց այնու ամենայնիւ խնդրեմ նայեցէք, տեսէք գլխիս մի հատ սպիտակ մազ կայ։

ՍԱՆԱՄ. — Էհ, հազիւ գլխիդ։

ԴԻԻՀ. — Այո, բոլորովին սեւ մազ չկայ։

ՄԱՇԴԻ. — Ուրեմն դրանից երեւում է որ մարդիկ տեսակ տեսակ են լինում։ Այդ երկուսից Արեւը, հիմա աշխարհը այնպէս է փոխուել, որ հիմակուայ ծերերը լաւն են, քան թէ ջահելները, օրինակ, ես Թարիխ Նադիրի գրուածքը մինչեւ կէսը կարդացել եմ, և համարեա բոլորը հասկացել. ուստի ես լաւ հասկացողութիւն ունիմ։ Այո՛, մարդու արտաքինը որ՛քան ալ տգեղ լինի, այնքան բարի կը լինի նրա ներքինը։ Այսպիսի մի առած կայ. «Նա չի լինի, սա լինի»։ Էհ, ի հարկէ չի լինի ջահելութիւնը՝ լինի փողը։ Փողը այնպիսի մի բան է որ, ծեր մարդին կը ջահելացնի, իսկ անփողութիւնը ջահիլներին էլ կը ծերացնի։

ՍԱՆԱՄ. — Երեւում է որ դու շատ փող ունես։

ՄԱՇԴԻ. — Փո՞ղ, ինչպէս հազ։ Ա.ռ այս 20 կոպէկը վերցրու, ծամօնի կը տաս։

ՍԱՆԱՄ. — Ոչ, շնորհակալ եմ, եթէ ինձ փող հարկաւոր լինի ազէս կասայ։

ՄԱՇԴԻ. — Այդ ուրիշ բան է։ Ես ու իմ Աստուածը, շատ լաւ կին է։ Աստ՛ տեսնեմ, դու ամուսին ունե՞ս։

ՍԱՆԱՄ. — Ո՛չ, ես այրի եմ։

ՄԱՇԴԻ. — Շատ գեղեցիկ, եթէ իմանայի առաջ սրանց կ՛առնէի յետոյ խառնումին։ Հա՛ յետոյ ի՞նչպէս է, կարողանու՞մ ես լաւ ապրել։

ՍԱՆԱՄ. — Ինչո՛ւ չէ, փառք Աստուծոյ լաւ է։

ՄԱՇԴԻ. — Խառնում դու բոլորովին չես խօսում։

ԴԻԻՀ. — Ես լաւում Զեզ։

ՄԱՇԴԻ.— Շատ գեղեցիկ, լսելն էլ լաւ բան է, լաւ տեղ է Աստուած վկայ։ Դիմացս երկու գեղեցկուհիներ, շատ լաւ եմ ճարել։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՄԱՇԴԻ,— Ա՛յ խանում ես եկել եմ,
Քեզի ինձի կին տանելու։ (կրկ.)
Եթէ որ դու ինձի լսես,
Լաւ շորեր եմ քեզ առնելու։ (կրկ)

ԳԻԼՆԱԶ.— Դու մի ծերացած պառաւ
Զահիլ աղջիկ ի՞նչ ես անում (կրկ.)
Քեզ հարկաւոր է 100 տարեկան
Պառաւ մի այրի կին։ (կրկ.)

ՄԱՇԴԻ.— Տեսնում եմ աչքիդ տակով,
Շատ ես նայում իմ երեսին (կրկ.)
Կը վախենամ որ այսուհետ՝
Խելք չը մնայ քո այդ գլխում (կրկ.)

ՍԱՆԱՄ.— Ա՛յ խանում, եկ ինձ լսի՛ր,
Հեռանանք մենք այս քաղաքից (կրկ.)
Միթէ չես տեսնում որ, հասակով
Շատ մեծ է քեզ, յարմար չէ։ (կրկ.)

ԳԻԼՆԱԶ.— Շրթներես վարդ է ծորում,
Ասա դու ինձ ինչ ես ասում, (կրկ.)
Քեզի պէտք է մի քաջքար կին,
Նունն էլ չը նայէ երեսին։ (կրկ.)

Առ այժմ ցտեսութիւն. մենք գնանք (գնում են)

ՄԱՇԴԻ.— Աստուած Զեր երկուսին էլ երկար կեանք տայ։ Սատանէն ասում է միանգամից երկուսին էլ առ։

ՏԵՍԻԼ 6

Ռ. ԲԷԳ.— (մտնում է) Մաշդի ի՞նչպէս եղաւ, հաւանեցի՞ր աղջկանս։

ՄԱՇԴԻ.—Աղջկանդ էլ հաւանեցի, հալա աղախնդ ալ։

Ռ. ԲԷԳ.— Մաշդի՛, 5 600 ռուպլուց էլ ձեռք քաշի՛ր, աղախին ալ քեզ փէշքեաշ։

ՄԱՇԳԻ.— Ո՛չ, դա մնայ յետոյ, իսկ հիմա ես գնամ։
Ռ. ԲԷԳ.— Ո՛չ Մաշդի, մի քիչ սպասիր։
ՄԱՇԳԻ.— Ի՞նչ կայ, չփոշմանեցի՞ր։
Ռ. ԲԷԳ.— Մաշդի, ես քո երեսին չեմ ասում, բայց լաւ իմանաս որ, քեզ հետ բարեկամ դառնալը ես մեծ փորձանք եմ համարում, և դրա համար էլ իմ մի քանի ընկերներիս հրաւիրել եմ այստեղ, որ մի լաւ քէֆ անենք և ժամանակ անցկացնենք։
ՄԱՇԳԻ.— Ռոստոմ Բէկ, շատ մարդ է ուզում ինձ հետ բարեկամ դառնալ, մինչև անգամ Զաֆար բէգի մօրաքրոջ որդի Դաշտամիր-բէգը, որը ինձ պարտք է 2000 ռուբլի, որի տոկոսն է անում 836 ռուբլի և 16 շահի, անցեալ օր ինձ պատահեց և ասաց. «Մաշդի, ինձ մի աղջիկ է ծնուել, որ մեծանայ պիտի քեզի տամ» բայց ես ամէն մարդու հետ չեմ ուզում բարեկամութիւն անել։ Ինչևիցէ... իսկ հիւրերդ ո՞վքեր են։
Ռ. ԲԷԳ.— Մէկը մեր Հասան-Ղուլի բէգն է, որին դու ճանաչում ես։
ՄԱՇԳԻ.— Ի՞նչպէս չէ, լաւ եմ ճանաչում, 200 ռուբլի էլ նա ինձ պարտք է։
Ռ. ԲԷԳ.— Մէկը խմբագիր Ռիզան է, որին կը ճանաչես, մէկը Ղուլի ասկեարն է։ Դէ՛, ասենք ո՞վ չի ճանաչում նրան, մէկը ինդելիդենդ Հասանն է, որին դու չես ճանաչել, որովհետև նա մեզպէս մարդկանցից փախչում է։ Շատ է կարդացել, դրա համար խելքը մի քիչ պակասել է։ (դուռը ծեծում են) Ահա և նրանք, համեցէք, համեցէք։ (մտնում են հիւրերը և երգում։)

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ԱՌԿԵԱՐ— Մաշտի հարսանիք է անում,
Գիւլնազ խանումին է առնում, (կրկ.)
ԽՈՒՄԲԸ.— Ուրեմն այսօր հարսանիք է. (կրկ.)
ԱՍԿԵԱՐ.— Այո՛, այո, հարսանիք է։ (կրկ.)

Խումբը.— Գրպանը լցրել է փողերով (2)
Մաշտի.— Ես Մաշտիս կին եմ առնում
Գիլնազ խանումին եմ առնում (2)
Խումբը.— Ուրեմն այսօր հարսանիք է, (2)
Ակեար,— Այո՛, այո՛, հարսանիք է։ (2)
Խումբը.— Գրպանը լցրել է փողերով. (2)
Ռ. ԲԷԳ.— Համեցէք, համեցէք, սիրելի հիւրերս, Ձեզ յայտնի է որ ես իմ միակ աչքիս լոյս աղջկանս տալիս եմ այս մարդին, ինքս էլ այս բարեկամութիւնը ինձ համար մեծ պատիւ եմ համարում։
ԲՈԼՈՐԸ.— Ի հարկէ, Ատուած չնորհաւոր անէ։
Ռ. ԲԷԳ.— Սիրելի բարեկամներս, խնդրում եմ մօտ նստեցէք սեղանին։
ՌԻԶԱ.— Իսկ Մաշադին:
ՄԱՇԴԻ.— Ո՛չ, ինձ ներեցէք. դուք քէյֆ արէք, իսկ ես այստեղ կը նստիմ։
ՀԱՍ, Ղ. ԲԷԳ.— Պարոններ խնդրում եմ, բաժակները լցրէք և թոյլ տուէք ինձ մի քանի խօսք ասել։
ԲՈԼՈՐԸ.— Խնդրեմ, խնդրեմ։
ՀԱՍ. Ղ. ԲԷԳ.— Ձեզ յայտնի է պարոններ որ, քանի գնում աշխարհը փչանում է, ես այն եմ ուզում ասել, որ այս աշխարհում բարի և ազնիւ սրտով մարդ դժուար կը գտնուի։
ՄԱՇԴԻ.— Ինչպէս ինձ նման յիմարը որ 200 ռուբլի եմ տուել և չեմ կարողանում առնել:
ՀԱՍ. Ղ. ԲԷԳ.— Այո՛, ես այն էի ուզում ասել որ, այսքան վատ սրտով մարդկանց մէջ մի բարեսիրտ մարդ տեսնելը, մեծ ուրախութիւն է. այն եմ ուզում ասել, որ այս Մաշադին որ այստեղ նստած է, հէնց իսկական այդ մարդկանցից է, և դրա համար էլ ես չնորհաւորում եմ։
ԱՍԿԵԱՐ.— Պարոններ, մէկ օր երեկոյեան ժամը 9ին, մէկ փողոցով անցնելիս, նկատեցի որ մէկը յետևիցս գալիս է, մի փոքր առաջ անցայ, տեսայ դարձեալ ինձ

հետևում է, ասացի, անպայման սա ինձ թշնամի կը լինի, հանեցի ատրճանակս, քաշեցի վերեւի ատքը և ձայն տուի. «Ո՞վ ես կանգնի՛ր,» այդ մարդը սկսեց փախչել, նորից ձայն տուի, «Ո՞վ ես կանգնի՛ր». բայց նա չի կանգնեց. զրրրր՛մ... մէկ գնդակ, և այդ մարդը անմիջապէս փռուեց գետին, մօտեցայ տեսնում ո՞վ է։ Մեր Մաշդի-Իբադը։ Ողջ լինիս, Մաշդի, կենացդ։

ՄԱՇԴԻ.— Շնորհակալ եմ, դուք ու Ձեր արիը, միթէ այստեղ այս պատմութեան կարիք կար։

ՀԱԵ. ԲԷԳ.— Պարոններ ինձ թոյլ տուէք, մի քանի խօսք ասելու։

ԲՈԼՈՐԸ.— Խնդրում ենք։

ՄԱՇԴԻ.— Տեսնենք, սա ի՞նչ է դուրս տալիս։

ՀԱՍ. ԲԷԳ.— Պարոններ ձեզ յայտնի է որդիտնակա՞ Դարվինը բոլորին ապացուցուց որ, մարդիկ կապիկից են առաջացել, Դարվինի այս խօսքին համամիտ լինելու համար մեզ հարկաւոր չի գնալ Աֆրիկա, այնտեղի կապիկներին տեսնելու, բայց բաւական է մեզ մօտ նստած Մաշդի-Իբադին նայել։ Ես այս խօսքերով չեմ ուզում Մաշտուն վիրաւորել, որովհետև ես ինքս էլ նման եմ կապիկի, բայց, ոչ այնքան, որքան Մաշդին, նա իսկական Օրանկուտան կապիկն է։ Ես նորից կրկնում եմ որ իմ նպատակս չէ մաշդի-Իբադին վիրաւորել։ Ես ուզում եմ ասել։ Ներեցէք, Մաշդի-Իբադին ի՞նչն է Ռոստոմ բէգը հաւանել, որ իր գեղեցկութի մատմազէլ Գիւլնազը տալիս է նրան։ Գեղեցկութեա՞ն, ո՛չ. դուք ինքներդ տեսնում էք որ նա տգեղ է։

ՄԱՇԴԻ.— Մուրդատի տղայ Մուրդատ, բռնես քիթ բերանը մի լաւ ջարդես։

ՀԱՍ. ԲԷԳ.— Ջահիլութեա՞նը։ Ո՛չ, Մաշդի-Իբադը ծեր մարդ է։ Ուրեմն, ի՞նչը ստիպեց Ռոստոմ բէգին այդ քայլը անել։ Մաշդի-Իբադի փողե՞րը, ո՛չ, ո՛չ, Ռուստամը փողասէր մարդ չի։ Դէ՛ ուրեմն ի՞նչը ստիպեց,

այս բոպէիս բացատրեմ։ Նայեցէք, մենք այստեղ նըստած զինի օղի ենք խմում։ Իսկ Մաշդին մի քանի քայլ մեզնից հեռու նստած ոչ ուտում է և ոչ էլ խըմում, ուրեմն Մաշդի-Իբադը ինչ է։ Մաշդի-Իբադը իսկական հաճի է և Ռոստոմ բէգը իմ կարծիքով նրա իսկական մուսուլմանութեանն է տուել իր գեղեցիկ մատմազէլ աղջիկ Գիւլնազին։ Ես այս բաժակը խմում եմ Ռոստոմ բէգի կենացը։

ԲՈԼՈՐԸ.— Ռոստոմ բէգի կենացը։

ՀԱՍ. ԲԷԳ.— Դէ՛, այսքանը բաւական է, կարծեմ ժամանակ է գնալու։ Ռոստոմ բէգ, ցտեսութիւն, Մաշդի-Իբադ ցտեսութիւն։

ՄԱՇԴԻ.— Կորի՛ր, Մուրդատ, ինձ մէյմուն է անեանում բաւական չէ՛ ձեռք էլ է տալիս։

ՀԱՍ. ԲԷԳ.— Ինչ, ինչ, սպասեցէք, սպասեցէք, ես քեզ ցոյց կ՚տամ։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՆ.— Ես քո սասծներիցը չեմ,
Այնպէս կը խփեմ (2)
Որ գլուխդ 20 տեղից
Կը ջախջախեմ

ԽՈՒՄԲԸ.— Ա՛յ մարդ Հասան, բաւակա՞ն է
ՄաՀսուն տանջես (2)
Դու մի հարուստ էնդելիգենդ
Ամօթ է քեզ։ (2)

ՄԱՇԱԴԻ.— Տօ՛ մի բողէք այդ մուրդատի
Գլուխը ջարդեմ
Ինձպէս մարդուն նա ի՞նչպէս է
Խայտառակում։

ՎԱՐԱԳՈՅՐ

Բ. ԱՐԱՐՈՒԱԾ

Բեմը բաժանուում է երկու մասի. աջ կողմը փողոց ձախը՝ սենեակ

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՏԵՍԻԼ 1

ՍԱՐՎԱՐ.— Գիւլնազ, Գիւլնազ իմ Գիւլնազ,
Սրբիր քո արցունքները,
Չեմ բաժանուի քեզնից մի օր
Ես եմ քո գլխի տէրը։ (2)
ԳԻՒԼՆԱԶ.— Երբ որ ես քեզ եմ տեսնում,
Ուրախութեամբ եմ ցնծում,
Սրտիս կրակն է ուժեղ
Չկա՞յ արդեօք նրան տեղ (2)
ՍԱՐՎԱՐ.— Սրտիդ ցաւը ես գիտեմ,
Անշուշտ նրան կը բուժեմ
ԳԻՒԼՆԱԶ.— Միայն թէ քեզ ինձի թող տան,
Կը մոռանամ ամեն բան։ (2)

ՏԵՍԻԼ 2

ՄԱՇՏԻ.— (մտնելով) Ես ուզում էի որ նշանածիս տեսութեան գիշերը գամ, բայց այս պատերը այնպէս բարձր են որ ցերեկն ալ դժուար է անցնելը, ոչ թէ գիշերը։ Եա Տէր Աստուած, (թռչում է), ոչ, կարծես այսպէս չի լինիր, սբասի մի համբալ կանչեմ ոտքերիս տակ պառկեցնեմ. համբա՛լ, այ համբալ։

ՏԵՍԻԼ 3

ՀԱՄԲԱԼ.— (վազելով) Ի՞նչ ես ուզում Մաշադի, ի՞նչ կայ տանելու։
ՄԱՇԴԻ.— Առ այս 20 կոպէկը և պառկիր ոտքերիս տակը։
ՀԱՄ.— Մաշդի՛, կը լինի թէ գողութեան ես գնում։
ՄԱՇԴԻ.— Զայնդ կտրի ախմախ, նշանածիս տեսութեան եմ գնում։

ՀԱՄ. — Աստուած ոյժ և կարողութիւն տայ, բայց տես մէջքս կը կտրես։

ՄԱՇԴԻ. — (բարձրանալով) Համբալ մի էդ թաշկինակը տուր ինձ.

ՀԱՄ. — Մաշդի, ախր որ չարժեմ վեր կ'ընկնես։

ՄԱՇԴԻ. — Ապասի՛ր տեսնեմ (նայում է)։ Աղջիկը այստեղ է, մօտն ալ մի տղամարդ կայ։

ԳԻՒԼՆԱԶ. — Ա՜խ, Տէր Աստուած, ո՞վ է այդ մարդը, ես վախենում եմ (փախչում է)։

ՄԱՇԴԻ. — Այ տղայ դու ո՞վ ես։

ՍԱՐՎԱՐ. — Իսկ դու ո՞վ ես.

ՄԱՇԴԻ. — Ես Մաշդի-Իբադն եմ։

ՍԱՐՎԱՐ. — Ես էլ Սարվարն եմ։

ՄԱՇԴԻ. — Իսկ այստեղ ի՞նչ ես չինում։

ՍԱՐՎԱՐ. — Իսկ դու այստեղ ի՞նչ ես չինում։

ՄԱՇԴԻ. — Ես իմ նշանածիս տեսութեան եմ եկել։

ՍԱՐՎԱՐ. — Ես էլ » « » »

ՀԱՄԲԱԼ. — Այ Մաշդի՛, մէջքս կոտրեց։

ՄԱՇԴԻ. — Այ համբալ, ապասիր տեսնեմ, ի՞նչ է աստուա՛ծ. ո՞վ է քո նշանածը։

ՍԱՐՎԱՐ. — Իսկ ո՞վ է քո նշանածը

ՄԱՇ. — Իմ նշանածը Ռոս. բէգի աղջիկ Գիւլնազն է։

ՍԱՐ. — Իմ նշանածն էլ Ռ. բէգի աղջիկ Գիւլնազն է։

ՄԱՇԴԻ. — Զայնդ կտրիր ախմախ, ինչպէս ես համարձակւում իմ նշանածիս անունը տալ։

ՍԱՐՎԱՐ. — Ախմախը դու ես, որ պատը չանդուռելով ես բարձրանում,

ՀԱՄԲԱԼ. — Ա՜յ Մաշդի, մէջքս կոտրեց, վայը ինձի՛ր։

ՄԱՇԴԻ. — Մատաղ լինիս այս ուռքերիս տակը պառկած համբալին, թէ չէ ես քեզ ցոյց կ'տայի. ('կինջնէ)

ՍԱՐՎԱՐ. — Այս շատ լաւ եղաւ որ մենք իրար հանդիպեցինք, տեսնենք վերջը ի՞նչ կը լինի։

ՀԱՄԲԱԼ. — Մաշտի՛, մէջքս կոտրեց մի աբասի էլ

A II 35303

պիտի տան։

ՄԱՇԴԻ.— Դէ՛, կորի՛ր, բոլորովին չեմ հասկանում թէ այս ի՞նչ բան է.

ՀԱՄԲԱՐ.— Մաշդի՛, կարծես աղջիկը երկու սիրական է ունեցել։

ՄԱՇԴԻ.— Ա՛յ մարդ, ես աղջկայ իսկական նշանածը լինելով փողոցի մէջ հնամ, իսկ մի յիմարի մէկը, այնտեղ նշանածիս մօտ հնայ։ Ա՛յ, քաֆասլոզ աղջիկ, պաֆասլոզ, (Գնում է)։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ԳԻՒԼՆԱԶ.— Ես վախենում եմ Սարվար,
Վատանգի ես ենթարկւում (2)
Եթէ դու ինձ չ՚լես,
Դժբաղդութիւն կը բերես։ (2)
Մի անիր իմ սիրելի
Մի գնա իմ սիրելի, (2)
Դու իմ քաջա իմ հերոս,
Դու ինձ մենակ մի թողնիր։ (2)

ՍԱՐՎԱՐ.— Գիւլնազ ես երդուել եմ
Մահը աչքս առել եմ (2)
Եթէ քեզ ինձանից խլեն
Կը մոռանամ ամէն բան։ (2)
Եկ իմ անգին դու եկ,
Եկ իմ սիրելիս դու եկ (2)
Ո՞վ ինձանից քեզ կը խլի
Մի վայրկեան նա չի ապրի։ (2)

ՍԱՐՎԱՐ ԵՒ ԳԻՒԼՆԱԶ ՄԻԱՍԻՆ

Երդում տուինք իրարու
Զը բաժանուել յաւիտեան (2)
Այժմ յանուն մեր սիրոյն
Կը տանջուինք յաւիտեան։ (2)

Քեզ իմ անգինս եմ սիրում,
Քո սիրովդ եմ տանջում (2)
Երդում տուինք մենք իրարու
Չի բաժանուենք յաւիտեան (2)

(Գալիս է Մաշդի և միւսներն)

ԱՍԿԵԱՐ.— Մաշդի՛ աղջիկն էլ է երգում։

ՄԱՇԴԻ.— Հիմա տեսնո՞ւմ էք, թէ գործը ինչպէ՞ս է։

ԱՍԿԵԱՐ.— Մաշդի՛, մի այս կողմը արի։ 2000 կ՚տաս, իսկ 1000 ընկերներիս։

ՄԱՇ.— Ա՛յ մարդ, ես այդքան փող ո՞ւտեղից ճարեմ։

ԱՍԿԵԱՐ.— Ինքդ ես իմանում, եթէ չես ուզում մենք կը գնանք և դու էլ ժողովրդի մէջ կը խայտառակուես։

ՄԱՇԴԻ.— Լա՛ւ, վաղը կ՚տամ, անցիր ինձ մօտ վաղը և տայիր։ Բայց հիմա, հիմա այդ մարդին սպանիր, որովհետև նրա ձայնը լսելիս սիրտս կտոր կտոր է լինում։

ԱՍԿԵԱՐ.— Հանեցէք զէնքերդ, պատրաստուեցէք, հէնց որ ասեմ, մէկ, երկու երեք, կրակեցէ՛ք, պատժաստեցէք, մէկ երկու (շուտ փախչում է)։

ԴԻՒԼՆԱԶ.— Ա՛խ, վախից սիրտս թռթռում է։

ՍԱՐՎԱՐ.— Բոլորովին մի վախենայ, գնանք ներս։ (Գնում են)։

Ռ. ԲԷԳ.— Ճիշդ է Մաշդի-Իբադի մի 2000ի վրայ քար գցեցի, բայց Դիւլնազիս շատ եմ խղճում, որովհետև ես նրան ժիրաղղայրում եմ։ Իմ աղջիկս բոլորովին Մաշադին յարմար չէ, բայց ի՞նչ արած, փող չունենալը մարդուս շատ է նեղում.

ՏԵՍԻԼ 4

(Մտնում է եւ շեմքում պատահում է Սարվարին)

Ռ. ԲԷԳ— Ո՞վ ես դու, և իմ տանը ի՞նչ գործ ունես։

ՍԱՐՎԱՐ.— Ես... քո... տանը...

Ռ. ԲԷԳ.— Ասա ինձ այս բոպէիս, ինչո՞ւ համար ես եկել իմ տուն։

ԹԱՐՎԱՐ.— Ես քո տանը ոտք չէի կոխել, եթէ քո աղջկայ չի սիրէի, և նա էլ ինձ չ'սիրէր։

Ռ. ԲԷԳ.— Այդ ի՞նչ խօսք է, ի՞նչպէս ես համարձակւում, այս ըոպէիս մի գնտակ զարկում և գլուխդ ցրել կ'տամ։

ՍԱՐՎԱՐ.— Գնդակը ես էլ եմ զարկելու։

Ռ. ԲԷԳ.— Ո՞ւմը.

ՍԱՐՎԱՐ.— Ինձ։

Ռ. ԲԷԳ.— Այդ ի՞նչ խօսք է։

ՍԱՐՎԱՐ.— Որովհետև Գիւլնազիս ոպանելուց յետոյ, ես չեմ ուզում ապրել։

Ռ. ԲԷԳ.— Դու իմ աղջկայ չես կարող ոպանել։

ՍԱՐՎԱՐ.— Դու չես իմանալ։

Ռ. ԲԷԳ.— Ի՞նչպէս։

ՍԱՌ.— Որովհետև առաջ քեզ եմ ոպանելու։

Ռ. ԲԷԳ.— Այդ ի՞նչ ես ասում, խելագարուե՞լ ես ի՞նչ է։

ՍԱՐՎԱՐ.— Ա՛խ, դու ուզում ես Գիւլնազին դամբարանացնել, բայց Սարվարս, քե՛զ, Ռոսդոմ բէգին ասում եմ, որ եթէ աղջիկդ ինձ չ'տաս, այն ժամանակ, այն ժամանակ մէկ փամփուշտ քեզ, մէկը Գիւլնազին և մէկն էլ ինձ եմ զարկելու։

Ռ. ԲԷԳ.— Բայց չէ՞ որ ես ուրիշին խօսք եմ տուել և գործը արդէն վերջացել է։

ՍԱՐՎԱՐ.— Եթէ որ դու ինձ լսես, գործը շատ հեշտ կերպով կը դրատեմ։

Ռ. ԲԷԳ.— Ի՞նչպէս կը տրատես։

ՍԱՐՎԱՐ,— Առաջ ասա տեսնեմ բարկութիւնդ ի՞նչ է։

Ռ. ԲԷԳ.— Ինչաւ. (ականջին) ա՛յ մարդ թող տեսնեմ, միթէ այդպիսի բան կարելի՞ է։

ՍԱՐՎԱՐ.— Քո արեւդ վկայ ճիշդ եմ ասում, համաձա՞յն ես։

Ռ. ԲԷԳ.— Շատ լաւ համաձայն եմ, իսկ եթէ չի յաջողուի։

ՍԱՐՎԱՐ.— Այն ժամանակ ո՞ւմ ուզես տուր։
Ռ. ԲԷԳ.— Շատ լաւ։
ՍԱՐՎԱՐ.— Բայց դու Մաշդի Իրաղին ոչինչ չ՚ասես։ և միայն չտապեցրու որ, նա, որքան կարելի է շուտով, հարսանիք չուտով անէ։
Ռ. ԲԷԳ.— Շատ լաւ, կարծես որ խելքիդ մօտիկ բան ասեցիր:
ՍԱՐ.— Եթէ գործը յաջղվեց շատ լաւ, իսկ եթէ ոչ։

. . . . . .

ԵՐԳ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՍԱՐՎԱՐ.— Եթէ գործս գրատեցիր։
Ռ. ԲԷԳ.— Եթէ գործդ գրատեցի։
ՍԱՐՎԱՐ.— Գիւլնազ խանումին ինձ տուիր։
Ռ. ԲԷԳ.— Գեւլնազ խանումին քեզ տուի։
ՍԱՐՎԱՐ.— Այն ժամանակ ես քեզ կ՚ասեմ,
Որ դու մարդ ես թասիր ունիս։ (2)
Ռ. ԲԷԳ.— Եթէ Մաշդուն դու խաբեցիր:
ՍԱՐՎԱՐ,— Եթէ Մաշդուն ես խաբեցի,
Ռ. ԲԷԳ.— Խայտառակութիւն դու չ՚արիր։
ՍԱՐՎԱՐ.— Խայտառակութիւն ես չ՚արի։
Ռ. ԲԷԳ.— Գիւլնազ խանումին քեզ կը տամ,
Եթէ մարդ եմ թասիր ունիմ։ (գնում են)

ՏԵՍԻԼ 5

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ (Բայաթի)

ՄԱՇԴԻ.— Մնացել եմ համբալիս հետ,
ՀԱՄՄԱԼ.— (Պատի տակ նստած) Փողերս գնացին։
ՄԱՇԴԻ.— Դրպանս է դատարկ,
Ես Մաշդիս սիրուց խենթացած կանգնած եմ,
Դռանդ այ քեաֆուր դուռն բաց։
ՀՍՄ,— Եթիմ եմ ես, եթիմ եմ ես, ունիմ, չունիմ
Մինակ մի մայր,

Լաւ տղայ ես թողել գնացել,
Ա՛յ սրան ստեղծող
Քեամբախտ հա՛յր։
ՄԱՇԴԻ, — Ես Մաշդիս գողը արած սրտիս մէջ
Ծալլապատիկ նստած եմ դռանդ
Թէ չը մտնես դու իմ դրուքթեանս մէջ
Թող բոլորսի այսուհետև քու ջահդ։

ՏԵՍԻԼ 6

ՀԱՍԱՆ Ղ. ԲԷՐ, — Ա՛... Մաշդի, բարև, այ մարդ, այս ի՞նչ բաներ եմ լսում, իբր թէ օրիորդը երկու սիրական է ունեցել։
ՄԱՇԴԻ. — Ա՛յ Հասան Ղուլի բէգ, դու քո Աստուածը, Ռոստոմ բէկը քեզ մօտ չասա՞ծ որ աղջիկը ինձ է տալիս։
ՀԱՍԱՆ Ղ, ԲԷԳ. — Ասա՛ց։
ՄԱՇԴԻ. — Ցետոյ ինձ իր տունը չ'հրաւիրե՞ց։
ՀԱՍԱՆ Ղ. ԲԷԳ. — Հրաւիրեց.
ՄԱՇԴԻ. — Դուք էլ այնտեղ հիւր չեկա՞ք։
ՀԱՍԱՆ Ղ. ԲԷԳ. — Եկանք։
ՄԱՇԴԻ, — Ինձ էլ այնտեղ չ'շնորհաւորեցի՞ք
ՀԱՍԱՆ Ղ. ԲԷԳ. — Շնորհաւորեցինք։
ՄԱՇԴԻ։—Մէկն էլ ինձ այնտեղ մէյմուն չանուանե՞ց։
ՀԱՍԱՆ Ղ, ԲԷԳ. — Անուանեց։
ՄԱՇԴԻ. — Ես էլ նրա հետ չ'կռուեցի՞։
ՀԱՍԱՆ Ղ, ԲԷԳ. — Կռուեցէր։
ՄԱԷԴԻ. — Դուք էլ այնտեղ մեզ չ'բաժանեցի՞ք։
ՀԱՍԱՆ Ղ. ԲԷՐ. — Բաժանեցինք։
ՄԱՇԴԻ. — Բա սա ի՞նչ քեալաք է, որ Ռոստոմ բէգը իմ գլուխս է բերում, մէջտեղ էլ իմ 5000 մանէթս ուտում հը՞...։
ՀԱՍԱՆ Ղ. ԲԷԳ. — Մաշդի դու բոլորովին հանգիստ կաց, այդ գործը դրատելը շատ հեշտ է. ուզում ես, ես, դրատեմ։
ՄԱՇԴԻ. — Ա՛յ մարդ. Աստուած հօրդ հոգին լուսաւո-

բէ. գրատէ՛, օգնիր ինձ, թէ չէ գործս շատ վատ է։
ՀԱՍԱՆ Գ. ԲԷԳ.— Շատ լաւ, այն ժամանակ շուտ արա՛, մի 500 մանէթ հանիր, որովհետև այս գործը գրաւելու համար մի քիչ փող է հարկաւոր։
ՄԱՇԴԻ.— Ի՞նչ, 500 մանէթ փող տա՞մ։
Հ. Գ. ԲԷԳ.— Ի հարկէ, առանց փողի հօ չի լինի։
ՄԱՇԴԻ.— Ա՞յ մարդ, Աստուած վկայ ես քանդուեցի, այդքան փող ես ո՞րտեղից ճարեմ։
Հ. Գ. ԲԷԳ.— Ինքդ ես խմանում, բայց իմ կարծիքով 5000 մանէթ ծախողը մի 500 մանէթ էլ կը ծախի, շատ հօ չի՛։
ՄԱՇԴԻ.— Զրի մէջ ընկնողը անձրևից չի վախենայ. ա՛ռ, մէկ 100, ա՛ռ 200, սա 300, 200 էլ դու ես ինձ պարտք. եղաւ 500։
ՀԱՍ. Գ. ԲԷԳ.— Այո՛ ճիշդ է, է՛ դէ հիմա գործը կը գրաւեմ, բայց դու իմբագիր Ռիզային տես, որովհետև Ռոսամ բէգը լրագրից շատ է վախենում. ահա՛ և նա։

ՏԵՍԻԼ 7

ՌԻԶԱ.— Էֆէնդիմ, սա ի՞նչ բան է՝ կ՚ասեն աղջիկը երկու սիրահար է ունեցել։
ՄԱՇԴԻ.— Ա՛յ Ռիզա բէգ, քեզ մի բան եմ խնդրում։ Դու եկ գրիչդ վերցրու ձեռքդ և այս բանը լրագրիդ մէջը գրիր և Ռոսամ բէգին մի լաւ խայտառակիր։
ՌԻԶԱ.— Ներողութիւն էֆէնդիմ, սանկ բաներ ես չեմ կրնար ընել։
ՄԱՇԴԻ.— Ինչո՞ւ։
ՌԻԶԱ.— Վասնզի սոյնանման գործեր չեն պարունակեր ծրագրոյս մէջ. ի՞նչ գործ մը ունի հասարակութիւնը ձեր անձնական հաշիւներին հետ։
ՄԱՇԴԻ.— Ա՛յ մարդ, Աստուած վկայ սա հէնց ինքը մի լրագրի բան է։

ՄԻՋԱ.— Ո՛չ Մաշդի, մի խնդրի, ես չեմ կարող շեղվել բռնած ուղիից։

ՄԱՇԴԻ.— Ինչո՞ւ, այս փոքրիկ թղթի վրայ գրելը ի՞նչ մեծ բան է։

ՏԵՍԻԼ 8

ՀԱՍԱՆ.— (Մտնելով) Անցեալ օրը դու ինձ վիրաւորել ես և ես գործը տուել եմ դատարանին.

ՄԱՇԴԻ.— Ա՛յ մարդ, ի սէր Աստուծոյ ձեռք քաշիր ինձանից, ինձ կապիկ անուանեցիր բաւական չէ, դատարա՞ն էլ ես կանչում։

ՀԱՍԱՆ — Ո՛չ, ձեռք չեմ քաշելու, դու պէտք է ինձ դատարանում պատասխան տաս։

ՄԱՇԴԻ.— Ա՛յ մարդ, ես այստեղիմ դարտից չիմ իմանում թէ ի՞նչ եմ անում, դուէլ եկել ես եախխս չոքել։

ՀԱՍԱՆ Ղ. ԲԷԳ.— Մաշդի՛, բերանը մի բան դցիր, կորնի գնայ։

ՄԱՇԴԻ.— Ա՛յ մարդ, բա՛ սրան էլ փո՞ղ տամ։

Հ. Ղ. ԲԷԳ.— Մի 50 ռուբլի տուր, ձեռք քաշի գնայ։

ՄԱՇԴԻ.— Առ վերցրու կորիր։

ՀԱՍԱՆ.— Ա՛, այդ ուրիշ բան է։

ՀԱՄԲԱՐ.— Ա՛յ մարդ այսքան ժողովրդին փող ես բաժանում, բա իմ մէկ աբասին։

ՄԱՇԴԻ.— Դէ՛ կորիր, դու էլ պակաս.

ԱՍԿԵԱՐ.— Ժողովո՛ւրդ, եկէք այս գործը վճռենք. այսպէս չէ կարելի։ Ռոստամ բէկը, այս մարդուն խաբում է, չէ որ սա էլ մեղք է, այսքան փող է ծախսում և ինքն էլ խայտառակում է, հէնց այս բոպէիս Ռոստամ բէգին այստեղ կանչենք և մի լաւ խայտառակենք։

ԲՈԼՈՐԸ.— Ի հարկէ, ի հարկէ, (կանչում են Ռուստամ բէգին և գալիս է։

ՏԵՍԻԼ 9

ԽՈՒՄԲԸ.— Բաց արա դուռը, բաց արա դուռը,
Բաց արա դուռը որ գանք քեզ սպանենք
Փամփուշտներս պատրաստ է փչտոփներս լիքը
Բաց արա դուռը որ գանք քեզ սպանենք։

Ռ. ԲԷԳ.— Ի՞նչ է՛ք ինձանից ուզում,
Դուռը ինչո՞ւ է՛ք ծեծում,
Ի՞նչ է՛ք ինձանից ուզում,,
Ի՞նչ է Ձեր միտքը

ԽՈՒՄԲԸ.— Բաց արա դուռը։

Ռ. ԲԷԳ.— Դուռը ես կը բացեմ
Ձեզի ներս կ՚ընդունեմ
Եթէ որ դուք լռէք
Ինձի կը լսէք։ (Դուրս է գալիս)։

Ռ. ԲԷԳ.— Ճիշդն ասած, ես չի գիտէի թէ դուք ի՞նչ է՛ք ուզում։

ՄԱՇԴԻ.— Ի՞նչպէս թէ չգիտես, ինձանից այնքան փոզերը առար և սուտ-սուտ ասում ես թէ աղջիկը քեզ եմ ասլիս, իսկ բանից դուրս է գալիս, որ ուրիշի ես ուզում տալ։

Ռ. ԲԷԳ.— Այդ ո՞վ է ասում։

ՄԱՇԴԻ.— Ես ինքս տեսայ որ աղջկանդ մօտ մի երիտասարդ կար, հարցրի թէ ո՞վ ես, նա էլ ասաց, որ աղջկայ սիրականն եմ։

Ռ. ԲԷԳ.— (Ծիծաղ) ա՛յ մարդ, գիտե՞ս թէ ով է եղել նա, աղջկանս մօրեղբայրը։ Նա քեզ հետ հանաք է արել, դու էլ հաւատացել ես։ Ամօթ Ձեզ պարոններ, որ այդպիսի յիմար խօսքերին հաւատում է՛ք և ինձ էլ վիրաւորում.

ԲՈԼՈՐԸ.— Ներողութիւն, չենք լսացել. Մաշդին է մեղաւոր, նա՛ մեզ ասաց։

ՄԱՇԴԻ.— Ների՛ր, ի սէրն Աստուծոյ։ Աստուած երկար կեանք տայ, որ մեզ այս կասկածանքներից հանեցիր։ Ճիշդն ասած, ես շատ վատ էի դարձել. ա՛յ մարդիկ, ես ախր ասում եմ որ Ռուստամ բէգը այսպիսի մարդ չի. Ռուստամ բէգ այս մօտ օրերս ես ուզում եմ հարսանիք անենք։

Դ. ԲԷԳ.— Շատ էլ լաւ կ'անեսս Ո՛ւրքան շուտ լինի, այնքան լաւ կը լինի։

ՄԱՇԴԻ.— Ուրեմն ես այսօր պանքայից փող հանել կ'տամ, և այս մօտ օրերս հարսանիք կ'անենք։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ԽՈՒՄԲ.— Դէ Մաշդի ուրախացի՛ր,
Հարսանիքը գլուխ բերիր, (0)
Դաֆ ու զուրնա ածեցէք,
Ուրախացէք ու պարէք։ (2(

ՊԱՐ

ՄԱՇԴԻ.— Ես Մաշդիս խելօք եմ,
Հազարներին կը ծախեմ, (2)
Ռուստամ-բէգ քեզ եմ ասում,
Հատատ եղիր քո խօսքում։ (2)

ՊԱՐ

ԽՈՒՄԲԸ.— Ռուստամ բէգը թէ մարդ է,
Իրա խօսքին հատատ է, (2)
Գիւլնազ խանումը քոնն է,
Թէ շուտ փողերդ հանէ։

ՊԱՐ

ՀԱՄԲԱՐ.— Ա՛յ Մաշդի, մեղք եմ ես,
Մէջքս եղաւ երկու կէս, (2)
Մատաղ լինեմ քո հարսին,
Տուր ինձ իմ մի աբասին.

ՊԱՐ

ՄԱՇԴԻ. — Ա՛յ համբալ հեռացիր,
Արտասուն մաքիցդ հանիր, (2)
Շուտով իմ հարսանիքս է,
Ուրախացիր ու պարիր:

ՊԱՐ

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐ. Գ

Մասադի տունը

ՏԵՍԻԼ 1

ԱՄԿԵՍԱՐ. — Ես թառ ածելն հրամայում եմ վը մեր ակարին նուագէ և Հասան Ղուլի բէգն պարէ:

ՊԱՐԵՐ

ՀԱՍԱՆ. — Դէ՛, հիմա ժամանակ է գնալ և հարսին բերելու: (Գնում են)

ՏԵՍԻԼ 2

ՄԱՇԴԻ. — Թուրքերում մի առած կայ, ասում է, ամէն մի դեղեցկութիւն, մի պակասութիւն կ'ունենայ: Հիւրերս որ այստեղ նստած էին, ես միւս անելակում սաղ օրը մտածում էի, թէ ես ի՞նչ պակասութիւն ունիմ: Հիմա հասկացել եմ: Եթէ ես մի պակասութիւն ունիմ, դա էլ իմ անպակասութիւնն է, ճիշդ է, սա մի շատ դժուար հարց է, բայց իսկապէս, հէնց այդպէս է որ կայ: Եւ վերջապէս եթէ մի պակասութիւն ունենայի, ժողովուրդը կ'ասէր, իսկ աղ-

ջիկն էլ որքան որ գեղեցիկ է, այնքան էլ ինձ վրայ թանգ նստեց, 5000 ռուբլի, 5000 ռուբլի Ռուսաստամ բէգին, 500 մանէթ Հասան Ղուլի բէգին ուշվատ, 50 մանէթ Հասանին ուշվատ, 100 մանէթ Ռիզա բէգին ուշվատ, մի արասի համբալին։ Էհ, որ չհաշուեմ լաւ է, որովհետև, ո՞րքան հաշուում եմ այնքան վատ եմ դառնում և յուսահատում. Էհ, աղջիկը գայ տեսնենք, ի՞նչ կը լինի. բայց ես մի բանից եմ վախենում, որ աղջիկը տանը մենակ մնալով չկարողանայ տանել, որովհետև, այդպիսի տանը մեծացած աղջկերքը անհամբեր են լինում. Բայց ի նչ իրաւունքով։ Աստուած վկայ, այսօրուանից մի կողպէկ եմ առնելու առաւօտները խանութ գնալիս. դուռը կը փակեմ բանալին կը դնեմ ջէբս և այնպէս կը գնամ։ Երեկոյեան վերադառնալով ես ինքս կը բանամ, թող տանը մնայ ու սովորի, հա՛, պատուհաններն ալ վաղուանից տախտակել կ'տամ։ Եւ եթէ շատ զահլէս տանի մի լաւ կը ծեծիմ, որովհետև, եթէ մարդ իր կընկանը չ'ծեծի, կինը կարող է փչանալ։ Եւ որքան էլ կինը ամուսնուց քէօթակ ուտի, այնքան ամուսնուն կը սիրէ. ես ինքս այդ բանը շատ եմ փորձել։ Հանդուցեալ Սօնին մի անգամ մի լաւ հուացրի, երկու ժամ չկարողացաւ ուշքի գայ, էն էր ու էն, ներանից յետոյ, միշտ ու գալիս էի տուն երեսս ծիծաղում էր։ Հա՛, միայն էն մուրթատի աղջիկ Գիւլ խանումն էր (բեմի յետևից նուագ) որ մի անգամ փայտով ծեծելուց յետոյ փախաւ հօրը տունը և այլևս չեկաւ։ (Զայներ) Օհօ՛, հարսը բերում են. (բոլորը ներս են մտնում) ես փախչիմ (գնում է։)

ՏԵՍԻԼ 3

Սարվար հարսի շորերով, հիւրեր, և համալը հայելին բերում է դընում սեղանին.)

ՀԱՍԱՆ.— Դէ, դուրս եկէք, Սատամ դու այն սեղեակում կաց. (բոլորն էլ գնում են։)

ՏԵՍԻԼ 4 4

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՄԱՌԴԻ. — Ես որքան էլ ծերացած լինեմ,
Հազար ջահելի կ՚արժենամ,
Աղջիկ չեմ ուզի ամէն մարդուց
Ամենի տունը ես չեմ գնայ։
Չեմ բարեւի ամենին...
Ե՛կ Գիւլնազ խանում, ինձ մօտ եկ,
Իմ անգինա, ինձ մօտ եկ,
Քեզ մատաղ, քեզ մատաղ, քեզ մատաղ, եկ։(2)
Դու ես ճարը իմ ցաւերի,
Չեմ խնայի քեզնից կեանք,
Իմ ջանս, իմ կեանքս, իմ մալս քեզ։

ՊԱՐ

Այ գեղեցիկ Գիւլնազ խանում,
Մի այդ ջարշաւդ յետ գցիր,
Որ այդ սիրուն երեսդ տեսնեմ։

ՍԱՐՎԱՐ.— (Վեր թռչելով) Զայնդ կտրիր, թէ չէ կրակեցի, շուտ թուղթ ու գրիչ վերցրու։

ՄԱՇ.— Դէ՛ սպասիր գտնեմ էլի. դէ՛ հիմա ինչ անեմ։

ՍԱՐՎԱՐ.— Նստիր և ինչ որ կ՚ասեմ գրիր.

ՄԱՇ.— Կը գրեմ, Աստուած վկայ կը գրեմ.

ՎԱՐՎԱՐ.— Ես Մաշդի Իբադ Գեալբալայի Խոչալէրաս օղլու....

ՄԱՇ.— Լա՛ւ, հօրս անունն որտեղի՞ց ես իմանում.

ՍԱՐՎԱՌ.— Ոչ՚մի խօսք թէ չէ կրակեցի.

ՄԱՇԴԻ.— Աստուած վկայ է չեմ խօսում.

ՍԱՐ.—Ռ. բէգի աղջկան Գիւլնազին չեմ ուզում առնել։

ՄԱՇԴԻ.— Ախր ուզում եմ.

ՍԱՐ.— Չեմ ուզում.

ՄԱՇԴԻ.— Չեմ ուզում, չեմ ուզում.

ՍԱՐ.—Եւ խնդրում եմ որ նրա քեռապին յետ կարդացէք.

ՄԱՇ. — Ախր ո՞վ է խնդրում.

ՍԱՐ. — Գրի՛ր.

ՄԱՇ. — Գրում եմ գրում եմ, էդ բերանը էն կողմը պահիր.

ՍԱՐ. — Եւ փոխարէնը առնում եմ նրա ուղախին Սանամին, գրեցի՞ր.

ՄԱՇ. — Գրեցի.

ՍԱՐ. — Դէ՛ ձեռք քաշիր.

ՄԱՇ. — Բա իմ փոգե՞րա.

ՍԱՐ. — Դէ՛ շուտ.

ՄԱՇ. — Քաշեցի, քաշեցի,

ՍԱՐ. — Տուր այստեղ, դէ հիմա չշարժուես, լսո՞ւմ ես.

ՄԱՇ. — Չեմ շարժուում, չեմ շարժուում.

ՍԱՐ. — Մի խօսիր.

ՄԱՇ. — Չեմ խօսում.

ՍԱՌ. — Լռի՛ր.

ՄԱՇ. — Լռում եմ.

ՍԹՐ. Սանամ, դէ հիմա քո կինը սա է լինելու, չը շարժուես.

ՄԱՇ. — Չեմ շարժուում.

ՍԱՐ. — Չէնդ.

ՄԱՇ. — Չէնա, (Սարսափ փախչում է)։ Ա՛յ մարդիկ, օգնեցէ՛ք, բռնեցէ՛ք, փախա՛ւ, էս ի՞նչ օյին էր։ վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ՏԵՍԻԼ 5

ԺՈՂՈՎՈՒՐԴ. — Ի՞նչ է պատահել, ի՞նչ կայ.

ՄԱՇ. — Ա՛յ մարդիկ, դուք որ հարսին բերիք, բա, մի չնայեցիք, տղայ էր թէ աղջիկ.

ԱՌԼՈՐԸ. — Այդ ի՞նչ խօսքեր է, ի հարկէ, աղջիկ էր։

ՄԱՇ. — Բայց այդ հարսը տղայ դուրս եկաւ, վա՛յ Ռուստամ բէգ, իմ տունն քանդեց. աղջկայ տեղ, տղայ ուղարկեց, էն էլ փախաւ գնա՛ց.

ԲՈԼՈՐԸ .— Վայ՛, այդ ինչպէս կարելի է այսպիսի մարդուն խաբեց. դէ, հիմա ինչպէս անենք.

ՀԱՍԱՆ Դ. ԲԷԳ .— Մաշդի, մի 50 մանէթից, ձեռք քաշիր գնամ, այս բոպէիս հարանացուդ այստեղ բերեմ, յօժա՞ր ես։

ՄԱՇ .— Ո՛չ...

ԱՍԿԵԱՐ .— Մաշդի մի 30 մանէթ տուր, այս բոպէիս գնամ նրան գնդակահար անեմ, յօժա՞ր ես.

ՄԱՇ .— Ո՛չ...

ՌԻԶԻ .—Մի 20 մանէթ տուր, լոպգրիս մինչուցաւ խայտառակեմ անզգամին։

ՄԱՇ .— Ո՛չ, ո՛չ, ո՛չ...

ԲՈԼՈՐԸ .— Բա ի՞նչ ես ուզում.

ՄԱՇ .—Գնացէք մօլլին ասէք մեր քեռիկինը կարի.

ԲՈԼՈՐԸ .— Հա՛, այդ ուրիշ բան է.

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՄԱՇ .— Գնացէ՛ք, գնացէք մօլլինը ասէք,
Մեր քեռիկինը կարի,
Սանամ խանումին ինձ տուի՞ք
Յօժա՞ր ես, հա՛, հա՛, (2)

ՍԱՆԱՄ .— Հա՛, հա՛,

ԽՈՒՄԲԸ .— Գնանք, գնանք մօլլին ասենք
Ձեր քեռիկինը կարի,
Սանամ խանում քեզ տուինք
Յօժա՞ր ես. (2)

ՆՈՅՆ ԵՒ ԳԻՒԼՆԱԶ ՍԱՐՎԱՐ

ՄԱՇ .— Հա՛, հա՛. (3 անգամ)

ՄԱՇ. Մուրթատի տղէն հարսիս խլեց հերիք չէ, հիմա էլ եկել է առաջիս ցցել։

ՍԱՐՎԱՐ .— Մաշդի՛։ ես և իմ կինս Գիւլնազ խանումը եկանք քո հարսանիքը շնորհաւորելու.

ՄԱՇ .— Շատ պատիւ ես արել։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՍԱՆԱՄ. Ես կը դամ քեզ մի պայմանով
Որ դու ինձի լաւ պահես (2)

Թէ չես կարող ինձ պահել
Հէնց այժմեանից ինձ տար։ (2)
Յոժա՞ր ես

ՄԱՇ, Հա՛, հա՛. (3 անգամ)

ԱՄՆ. Յոժա՞ր ես... (3 անգամ)

ՄԱՇ. Ես Մաշադի շատ խարուեցայ։
Զահել աղջիկ փնտռեցի, (2)
Ողջ փողերս ծախսեցի
Բայց վերջապէս քեզ գտայ.
Յոժա՞ր ես։

ՍՈՒՆԱՄ. Հա, հա (3)
Մուլթատի աղէն ինձ թիւքայ խլեց, է՛հ ոչինչ, ազատ-խինն էլ լաւ է։ «Նա չիլինի Սա լինի»։
ՍԱՐ. Է՛հ, Մաշադի, արի հաշտուենք, չէ որ քեզ համար զանազանութիւն չունի. «Սա չի լինի, Նա լինի»։
ՄԱՇ. Բայց ես կ՚ուզէի երկուսն էլ լինէին։

ՊԱՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ԲՈԼՈՐԸ. Մաշդի թող քեզ խրատ լինի,
Զահել աղջիկ մի՛ փնտռի, (2)
Սանամ Խանումին քեզ տուինք,
Յոժա՞ր ես... (2)

ՄԱՇԴԻ. Հա՛, հա՛ (3 անգամ)

ԽՈՒՄԲԸ. Դուք ինչո՞ւ էք այդտեղ լռել
Ու չէք մեզ հետ մասնակցում, (2)
Գիւլնազ խանումը Սարվարին,
Սանամը Մաշտուն... Յոժար է՞ք։

ԲՈԼՈՐԸ.— Հա՛, հա՛։ (3 անգամ)

ՊԱՐ

ՎԱՐԱԳՈՅՐ

ՀՍՍՌ ԳՐՍՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

A II 35303

ԹԱՏԵՐԱՑԱՆԿ

Վ. ՉԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Գահիրէ, Շարա Քամէլ թիւ 4 (Նուպար փողոցի մօտ)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Թիւ 1.— Նա չը լինի սա լինի		Ե. Դ. 3.5
» 2.— Փարոսի Պահապանները		1.5

Զանազան նոր հրատարակութիւնք

Արշալոյն մալ ալան		5
Ուշ լինի նուշ լինի		3.5
Զաւալլը	Օտեան	1.5
Զարշալը Սրթին աղա	» Բ. Տպգ.	5
Սեւ թէ ճերմակ	Ժպտունի (4 կտաւակերպ.)	4
Ատիացի Սափրիչը		2.5
Թեկնածուներ	Փանոսեան	5
Երկու խուլեր	Մոլիէռ	3
Բաբելոնը	Ազատեան	5
Գիշերազգեստը	Շիշմանեան	5
Պէշիկթաշլեանի թատերգութիւնք 7 տեսակ		35
Համլէթ		7
Թիւք թաք		1
Պաշտօնս խռմբալ է		1.5

Պարբերաբար հրատարակուած «Գրացուցակ նոր հրատարակութեանց» ձրի կը զրկուի բոլոր փափաքողներուն: Հրատարակուած է առաջին թիւը։

ԳԻՆ 3.5 Ե. Դ.

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ 20 ՂՐՇ.

504.

Ա 55303

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ
220035303